



ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆԸ

Համառոտ նախնականային զեկույց

2011թ. հուլիս-սեպտեմբեր

Թուրքիայում 2011թ-ի հունիսին տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններից հետո նոր հնարավորություն առաջացավ Հայաստան-Թուրքիա հարաբերություններին անդադառնալու համար: Երկու երկրների քաղաքացիական հասարակությունների և ՉԼՄ-երի ներկայացուցիչներն իրենց վճռականությունը հայտնեցին՝ երկու կառավարությունների ուշադրությունը հրավիրելու երկխոսությանը և Արձանագրությունների վավերացման գործընթացին նոր շունչ հաղորդելու անհրաժեշտության վրա: Ավաղ, 2011թ-ի աշնան սկզբին երկխոսության վերսկսման հույսերը նվազեցին, և թե՛ հայկական, թե՛ թուրքական իշխանությունները հանդես եկան փոխադարձ հայտարարություններով՝ կրկին ընդգծելով իրենց բացասական դիրքորոշումները Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի առնչությամբ:

Հայաստան-Թուրքիա պաշտոնական հարաբերությունների սառեցված կարգավիճակը 2011թ-ի ամռան սկզբին անհրաժեշտություն առաջացրեց հայեցակարգային վերանայման ենթարկել «Աջակցություն Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավմանը» (SATR) ծրագիրը: Քաղաքական երկխոսության բացակայության պայմաններում Եվրասիա համագործակցություն հիմնադրամը (ԵՀՀ) և Կոնստրեկտիվ անդամները քայլեր ձեռնարկեցին՝ առավել ամրապնդելու գործարար և պրոֆեսիոնալ համագործակցությունը, ինչպես նաև քաղաքացիական հասարակության խմբերի միջև կապերի ձևավորումը:

Երրորդ նախնական ընթացքում՝ 2011թ-ի հուլիս-սեպտեմբերին, ծրագիրն առաջընթաց արձանագրեց Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավմանը նպաստող մի շարք ոլորտներում: Իրականացված միջոցառումների թվում էին.

- Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության (ՀԱԳՄ) օգնությամբ հիմնադրվեց Հայկական և թուրքական տուրիստական ընկերությունների ասոցիացիան (AATTC), որի նպատակն է զբոսաշրջային տոնավաճառներում ու ցուցադրություններում համատեղ մասնակցությամբ և համատեղ զբոսաշրջային փաթեթների մշակմամբ զարգացնել տարածաշրջանային զբոսաշրջությունը: Թեև ասոցիացիան պաշտոնապես գրանցված չէ ո՛չ Թուրքիայում, ո՛չ Հայաստանում, այն բաց է միանալու ցանկություն ունեցող բոլոր ճանապարհորդական ընկերությունների համար:

ՀԱԳՄ-ի, Թուրք-հայկական բիզնեսի զարգացման խորհրդի (TABDC) և ԵՀՀ-ի համատեղ ջանքերով հրապարակվեց «Հայաստան-Թուրքիա գործարար հարաբերությունները բիզնես շրջանում կարծիք ձևավորողների տեսանկյունից» անգլերեն և հայերեն զեկույցը:

2011-ի սեպտեմբերին Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի (ICHD) նախաձեռնությամբ տեղի ունեցավ SATR ծրագրի գործընկերների այցելությունն Անկարա: Այցելության ընթացքում ՀԱԳՄ-ն և Թուրքիայի տնտեսական քաղաքականության հետազոտական հիմնադրամը (TEPAV) ռազմավարական համագործակցության հիմք դրեցին: Այն թույլ կտա ՀԱԳՄ-ին, TABDC-ին և

TEPAV-ին միասնաբար աշխատել՝ մեծացնելու տարանցիկ ապրանքաշրջանառությունը և բազահայտելու տարանցիկ ճանապարհի, Թուրքիայում ապրանքներ բեռնելու կամ բեռնաթափելու նպատակով հայկական բեռնատարներին Թուրքիա մտնելու թույլտվություն շնորհելու հնարավորությունը:

- SATR ծրագիրը շարունակում է ջանքեր գործադրել երկու երկրներում Հայաստան-Թուրքիա հարաբերությունների վերաբերյալ ավելի հավասարակշիռ լրատվության տարածմանը նպատակելու ուղղությամբ: Երևանի մամուլի ակումբը (ԵՄՄ), Իզմիրի համալսարանը և Համաշխարհային քաղաքական միտումների կենտրոնը (GPOI) կազմակերպեցին երկրորդ Հայաստան-Թուրքիա լրագրության մրցանակաբաշխությունը, որը տեղի ունեցավ 2011թ-ի հուլիսին, Ստամբուլում Բելգիայի հյուպատոսարանում: Մրցանակը ստացավ թուրքական Milliyet թերթի մեկնաբան Կադրի Գուրսելը, որը Հայաստան-Թուրքիա հարաբերությունների վերաբերյալ օբյեկտիվ հոդվածների մի շարք էր հեղինակել: ԵՄՄ-ն և Իզմիրի համալսարանը մի համատեղ որակական գնկույց հրապարակեցին երկու երկրներում Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի վերաբերյալ լրատվության դինամիկայի վերաբերյալ: Զեկույցը կնպաստի երկկողմ հարաբերությունների վերաբերյալ հավասարակշիռ լրատվության տարածմանը՝ մատնանշելով հիմնական միտումները Հայաստան-Թուրքիա հարաբերությունների փոխադարձ դիտարկման ձևով և, դրանով իսկ, օգնելով երկու երկրների մեդիա մասնագետներին ձեռքբազատվել կլիշեներից և կարծրատիպերից:
- 2011-ի հուլիսին ԱՀՀ-ն, ԵՄՄ-ն և GPOI-ը կազմակերպեցին մի հայ-թուրքական քննարկում «Քաղաքականություն և լրատվություն» խորագրով: Թուրքիայի Հեյբելիադա կոզում, ինչպես նաև Ստամբուլում տեղի ունեցած այդ քննարկմանը մասնակցեցին 25 փորձագետներ Հայաստանից և Թուրքիայից: Քննարկման ընթացքում կարծիքներ փոխանակվեցին Հայաստան-Թուրքիա հարաբերությունների համատեքստում Թուրքիայի խորհրդարանական ընտրությունների և Միջին Արևելքի զարգացումների հետևանքների վերաբերյալ, ինչն էլ ավելի ամրապնդեց կարևոր քաղաքական հարցերի շուրջ հայ և թուրք մասնագետների փոխըմբռնումը:

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործում երիտասարդության ներգրավվածությունը և մշակութային երկխոսության դերն ընդգծելու համար ԵՀՀ-ն պատրաստեց երկու թեք-շոու, որոնք հեռարձակվեցին Երկիր Մեդիա հեռուստաընկերությամբ: 2011թ-ի հուլիսին 8-րդ «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի ընթացքում Երևանում ցուցադրվեցին հինգ հայ-թուրքական վավերագրական ֆիլմեր՝ պատրաստված Հայաստան-Թուրքիա կինոպատժարմի (ATCP) աջակցությամբ: Կինոփառատոնին մասնակցող կինոքննադատները և կինոարվեստի մասնագետները բարձր գնահատեցին ֆիլմերը և ATCP-ի աշխատանքը: Ֆիլմերը կշարունակվեն ներկայացվել տարբեր տարածաշրջանային և միջազգային կինոփառատոնների և կցուցադրվեն Նյու Յորքի համալսարանի Միջին Արևելքի հետազոտությունների կենտրոնում:
- Սահմանելով տրանսպորտի ու բեռնափոխադրումների ոլորտի հետազոտության կարևորությունը՝ ICHD-ն Հայաստանի և Թուրքիայի միջև տրանսպորտի ու բեռնափոխադրումների վերաբերյալ մի փոքրածավալ ուսումնասիրություն նախաձեռնեց: Բացի այդ, ICHD-ն երկու մեծածավալ հանրային քննարկում անցկացրեց Հայաստանում և Թուրքիայում՝ հստակեցնելու Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների ընթացիկ քաղաքական իրավիճակը:
- Կոնսորցիումը հինգ դրամաշնորհ տրամադրեց՝ 90,000 ԱՄՆ դոլարի ընդհանուր արժեքով: Դրամաշնորհները ստացող կազմակերպություններն էին՝
 - o Անկախ լրագրողների ցանցը («ԱՎՏՈՒՄ») շաբաթական լրատվության ծրագիրը,
 - o Ռոլան Բիկովի անվան հիմնադրամը (Երեվանների և պատանիների համար կինոյի 7-րդ միջազգային փառատոն),
 - o Նարեկավանք Տուր ՍՊԸ-ն (Հայ և թուրք ձեռնարկատերերի տեղեկատվական և աջակցության կենտրոն),
 - o Գյումրու զարգացման հիմնադրամ ՀԿ-ն (Գյումրի-Կարս երկրորդ տնտեսական համաժողով),
 - o «Ինքնագիր» գրական ակումբ (Հայախոս Համշեն մահմեդականների վերաբերյալ հետազոտություն):

SATR ծրագրի իրականացման 1-ին տարվա ձեռքբերումները, մարտահրավերները և դասերը ուղենիշ դարձան ԵՀՀ-ի և Կոնսորցիումի կողմից ծրագրի 2-րդ տարվա տարեկան աշխատանքային պլանի մշակման համար: Գործարար շփումները և քաղաքացիական հասարակությունների միջև կապերն ամրապնդելու խնդիրներին զուգահեռ՝ 2-րդ տարվա աշխատանքային պլանը նաև լրատվության և քաղաքականության հետազոտություն և մի շարք համալիր միջոցառումներ է ներառում: Ծրագիրը կշարունակի զարգացնել իր 1-ին տարվա հաջողություններն ու ձեռքբերումները՝ ձգտելով ընդլայնել ու խորացնել Հայաստանում և Թուրքիայում տարբեր խմբերի միջև երկխոսությունը:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը և Կոնսորցիումի անդամներն աջակցում են Հաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավմանը՝ խթանելով քաղաքացիական հասարակության տարբեր խմբերի մասնակցությունը, գործարար համագործակցության և տարածաշրջանային մասնագիտական ցանցերի հաստատումն ու զարգացումը, ինչպես նաև ժողովրդի կողմից տարածաշրջանում խաղաղության և տնտեսական ինտեգրացիայի առավել կարևորումը: Այս զննչի բովանդակության համար պատասխանատու է Կոնսորցիումը: Այստեղ արտահայտված տեսակետները կարող են չհամընկնել ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կամ ԱՄՆ կառավարության տեսակետներին: